ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Դ. ԵԼՊԱՏԻՍՅԱՆ

Ժողովուրդների դարավոր պատմությունը, ինչպես հայտնի է, ունի ողբերգական ոչ քիչ դրվագներ: Շահագործողական հասարակության պայմաններում ծանր, մղձավանջային պահեր են ապրել հատկապես փոքր ազգությունները, որոնց ֆիզիկական գոյությունը հանախ վտանգի է ենթարկվել: Իմպերիալիզմի դարաշրջանում ավելի դաժան ու մասսայական դարձան կոտորածները, համընդհանուր բնույթ ստացան ավերն ու բնաջնջումը, ցեղասպանությունը՝ գենոցիդը: Սակայն պատմության մեջ տեղի ունեցավ մեծ, վճռական շրջադարձ: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որ կատարվեց Վ. Ի. Լենինի ու նրա ստեղծած կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, նոր դարագլուխ բացեց մարդկության պատմության մեջ, փրկեց մեր երկրի ժողովուրդներին իմպերիալիզմի ոճրագործություններից, ազատագրեց նրանց ազգային ճնշումներից ու սոցիալական կեղեքումներից, բերեց խաղաղություն, իսկական ազատություն ու նոր, լուսավոր կյանք: Այս ակնհայտ ճշմարտության պերճախոս վկայությունն է նաև հայ ժողովրդի անցած պատմական ուղին, նրա ողբերգական անցյալն ու փառավոր ներկան:

1.

Վաթսուն տարի առաջ նախկին օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցավ մի հրեշավոր ոճրագործություն, որը դարձավ մարդկային հասարակության մեծագույն ողբերգություններից մեկը: Սուլթանական Թուրքիայի կառավարող շրջանները գազանարար կոտորածի ենթարկեցին մոտ միլիոն ու կես հայ բնակչություն և անապատի վերածեցին ամբողջ Արևմտյան Հայաստանը:

Օսմանյան կայսրության մեջ հայկական զանգվածային կոտորածներ տեղի ունեցան դեռևս 19-րդ դարի վերջերին: Արյունարբու սուլթան Արդուլ Համիդը 1894—1896 թթ. բնաջինջ արեց մոտ երեք հարյուր հազար մարդ: Սակայն երիտասարդ թուրքերի ազգայնամոլ կուսակցությունը, որը իշխանության գլուխ անցավ 1908 թ., վարեց ավելի դաժան քաղաքականություն:

Երիտթուրքերի մասին «Պրավդա» թերթը 1912 թ. գրում էր, թե «նրանց ձգտումը թուրքացնել Օսմանյան կայսրությունում բնակվող սլավոններին, հայերին, հրեաներին և ուրիշներին ընդունեց ավելի կոպիտ և համառ բնույթ, քան Արդուլ Համիդի ժամանակ»:

Երիտասարդ թուրքերի ռազմատենչ կուսակցությունը, հետապնդելով ագրեսիվ նպատակներ և չցանկանալով լսել ազգային փոքրամասնությունների որևէ իրավունքի մասին, նախապատրաստեց մի նոր, անօրինակ հանցագործություն: Որպեսզի վերջ տա Հայկական հարցին և դյուրությամբ իրականացնի իր ցնորամիտ պանթյուրքիստական նպատակները, նա որոշեց ֆիզիկապես ոչնչացնել օսմանյան ծանր լծից ազատվել ցանկացող հայ ժողովրդին:

Այդ զարհուրելի ծրագիրը թուրքական կառավարությունը իրականացրեց առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ ամենայն բարբարոսությամբ: Ջարդերը սկսվեցին դեռևս 1914 թ. վերջերին: Սկզբում ենթարկեցին գաղտնի կոտորեցին դիմադրելու ընդունակ բնակչության մեծ մասը: 1915 թ. ապրիլի 24-ին բանտարկվեցին ու ապա ոչնչացվեցին արևմտահայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ: Զոհերի թվում կին ականավոր գրողներ, բանաստեղծներ ու հրապարակախոսներ՝ Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը և շատ ուրիշներ: Ջարդարարները այնուհետև անցան անօգնական բնակչության համբնդհանուր կոտորածներին: Սկսվեց կանանց, երեխաների ու ծերունիների անխնա բնաջնջում, ընդ որում, նրանց մի մասը կոտորվեց հայրենի գյուղերում ու քաղաքներում, մյուս մասը, որ բռնի տեղահան էր արվել՝ ճանապարհներին, երրորդ մասը ոչնչացավ Միջագետքի անապատներում:

Կոտորածները իրականացվեցին ամենագազանային ձևերով: Ականատեսները, որոնց թվում հայեր, արաբներ, քրդեր, թուրքեր, եվրոպացիներ ու ամերիկացիներ, սարսափով են պատմում կատարված զազրելի ոճրագործությունների մասին:

Հայկական կոտորածները, որ առանձնապես ծավալվեցին 1915 թ., շարունակվեցին հետագա տարիներին Միջագետք և կայսրության մյուս անկյունները ախտորված հայ բնակչության նկատմամբ: Ջարդեր տեղի ունեցան Արևմտյան Հայաստանի բոլոր մասերում, Թուրքիայի բոլոր հայաբնակ վայրերում:

Ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, գավառական իշխանությունների մի շարք ստորին պաշտոնյաներ փորձեր են արել չկատարել կենտրոնական իշխանության հրամանները, որոնցում պահանջվում էր անխնա բնաջնջել հայ բնակչությունը: Այդպիսի արարքների համար նրանք ոչ միայն հեռացվել են իրենց պաշտոններից, այլև գնդակահարվել: Նշենք նաև այն հանգամանքը, որ Սիրիա ու Միջագետք ախտորված հայ գաղթականությունը, որ գտնվում էր ծայրահեղ թշվառ կացության մեջ, գաղտնի օգնություն էր ստանում տեղի արաբ բնակչության կողմից:

Հայերի մասսայական կոտորածների քաղաքականությունը ցեղասպանության—գենոցիդի քաղաքականություն էր, որ մանրամասնորեն մշակվեց և անողոքաբար իրականացվեց երիտթուրքերի կառավարության և մասնավորապես նրա երեք դեկավարների՝ արյունարբու դահիճներ Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի կողմից:

Երիտթուրքերի գազանությունները շատ բանով հիշեցնում են հիտլերյան ֆաշիստների արյունոտ գործողությունները: Թուրքական մարդասպանները որոշ իմաստով ֆաշիստ եղեռնագործների նախատիպերն են եղել: Պատահական չէ, որ դիվահար ֆյուրերը երբեմն վկայակոչում էր երիտթուրքական դահիճների «փորձը»: Այսպես, 1939 թ. օգոստոսին, Լենինգրադի վրա ֆաշիստական հորդաների հարձակման նախօրյակին, Օբերզալցբուրգ քաղաքում հրավիրված մի խորհրդակցության ժամանակ նա իր գեներալներին հիշեցրել է հայկական կոտորածները: Ոչ մի ուշադրություն հասարակական կարծիքին, հարկավոր է անխնա կոտորել տղամարդկանց, կանանց և երեխաներին, հար-

կավոր է, ոչնչացնել ողջ լեհական ռասան.— բարբառում էր Հիտլերը: «Ո՞վ է այսօր հիշում հայերի ջարդը»:

Կոտորածների ժամանակ արևմտահայերը, որտեղ այդ հնարավոր էր, դիմեցին զինված դիմադրության, ինքնապաշտպանական կռիվների: Իրենց կյանքն ու պատիվը փրկելու համար հերոսական պայքար մղեցին Վանի, Ուրֆայի, Շատախի, Շապին-Գարահիսարի, Սասունի և այլ քաղաքների ու շրջանների հայ բնակիչները: Առանձնապես հաջող անցավ Վան քաղաքի ինքնապաշտպանությունը, որը տևեց մոտ մեկ ամիս: Համաժողովրդական անձնազոհ պայքարով և ռուսական բանակի զորամասերի օգնությամբ Վանի բնակչությունը փրկվեց կոտորածներից: Անգիջում մաքառման շնորհիվ հաջողությամբ պսակվեց նաև Մուսա լեռան հերոսամարտը, որի մասին ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը գրել է «Մուսա լեռան 40 օրը» իր նշանավոր վեպը. Ի դեպ, այդ հերոսամարտը ոգևորել է Սլովենիայի լեռներում 1942 թվականին շրջապատված հարավսլավական պարտիզաններին գերմանա-իտալական ֆաշիստների դեմ մղած մարտերում:

Արևմտահայերի զանգվածային կոտորածների դեմ իր ձայնը բարձրացրեց ժամանակի առաջավոր ու մարդասեր ռասարակայնությունը: Բուռն ցասումով և վրդովմունքով հանդես եկան Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Յուրի Վեսելովսկին, Սերգեյ Կիրովը և ուրիշներ Ռուսաստանում, Անատոլ Ֆրանսը և Ռոմեն Ռոլանը՝ Ֆրանսիայում, Ֆրիտյոֆ Նանսենը՝ Նորվեգիայում, Կարլ Լիբկնեխտը և Յոզեֆ Մարկվարտը՝ Գերմանիայում, Ջեյմս Բրայսը՝ Անգլիայում և ուրիշներ: Տեղի ունեցան բողոքի հավաքույթներ, ընդունվեցին համապատասխան որոշումներ: Սակայն ոչինչ չազդեց հանցագործների վրա:

2.

Ի՞նչ դիրք բռնեցին մեծ պետությունները կատարվող անցքերի նկատմամբ: Ջարդարար երիտթուրքերին ամեն կերպ օգնում ու հովանավորում էր կայզերական Գերմանիան, որ պատերազմի տարիներին Թուրքիայի դաշնակիցն էր և աշխատում էր զավթել ամբողջ Մերձավոր Արևելքը: Հայերի կոտորածներն ու տեղահանությունը համապատասխանում էին նրա զավթողական-իմպերիալիստական ծրագրերին: Թուրքական բանակի ղեկավար կազմում զգալի տեղ էին գրավել գերմանական սպաները: Նրանց գործուն մասնակցությամբ մշակվեց հայկական կոտորածների ծրագիրը: Ավելին: Գերմանացի շատ զինվորականներ անմիջական մասնակցություն ունեցան հայերի գենոցիդի իրականացման գործին:

Անպաշտպան, անօգնական հայերի նկատմամբ խիստ փարիսեցիական դիրք բռնեցին արևմտաեվրոպական պետությունները և Ամերիկայի Միացյալ Նահանգները: Անգլիական ու ֆրանսիական կառավարությունները, որ հանախ հանդես էին գալիս որպես հայերի «հովանավորողներ», գործնական և ոչ մի քայլ չկատարեցին արյան մեջ խեղդվող արևմտահայ բնակչությանը օգնելու համար: Բնորոշ է, օրինակ, որ անգլիական կառավարությունը 1916 թ. սկզբներին մերժեց Ռուսաստանի արտաքին գործոց ministրության առաջարկը՝ ֆինանսական-տնտեսական օգնություն ցույց տալու հայ գաղթականությանը: Հայության նկատմամբ արևմտյան պետությունների բռնած դիրքը Մաքսիմ Գորկին որակել է որպես «նողկալի անտարբերություն»:

խոսելով այս հարցի մասին, Մարտիրոս Սարյանը գրել է. «Պատմական Հայաստանի զեղեցիկ բնաշխարհը ներկվեց անմեղ հայերի արյունով: Ամայացան տասնյակ հայաբնակ քաղաքներ, հազարավոր գյուղեր: Մարդասպանները կատաղի վայրագությամբ քանդեցին, ավերեցին, թալանեցին... Անլուր ողբերգություն, որ կատարվեց մեծ պետությունների աչքի առաջ: Թաքուն չէր ոնիրը, գիտեր ամբողջ աշխարհը՝ մարդասիրությունից, մարդկայնությունից հառող «քաղաքակիրթ» աշխարհը: Զարմանալի կերպով փակ մնացին այդ պետությունների աչքերը և՛ ոնրի պահին, և՛ նրանից հետո: Նրանք հանգիստ դիտեցին աշխարհով մեկ ցրված հայ գաղթականների տառապանքը, լսեցին հրանց հայրենաբաղձ ու արդարացի աղաղակները: Լսեցին ու լռեցին»:

Միանգամայն այլ քաղաքականություն վարեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ծնունդ Սովետական Ռուսաստանի կառավարությունը: Հավատարիմ լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներին, սովետական իշխանությունը հոգատար, մարդասիրական վերաբերմունք ցուցաբերեց հայ ժողովրդի նկատմամբ: Հովհաննես Թումանյանը նկատել է. «Ահա մի իշխանություն, որի գերի վրա տեսնում ենք ոչ թե զանազան գազաններ ու գենքեր, այլ մուրճ ու մանգաղ, բանվորի ու գյուղացու աշխատանքի սիմվոլը միատեղ ու միասին, մի իշխանություն, որ գալիս է, իր հետ բերելով հաշտ ու խաղաղ կյանք ու արդար աշխատանք, և ոչ թե կոիվ ու կոտորած»:

Խիստ բնորոշ է, որ արդեն 1917 թ. վերջերին Վ. Ի. Լենինը անձամբ զբաղվեց արևմտահայերի թախտով: Մեծ առաջնորդի նախագահությամբ դեկտեմբերի 29-ին տեղի ունեցավ ժողովրդական կոմիսարների խորհրդի նիստ, ուր քննարկվեց այդ հարցը և ընդունվեց դեկրետ «Թուրքահայաստանի մասին»: Պատմական այդ փաստաթուղթը, որ ստորագրեց Վ. Ի. Լենինը, հռչակեց Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը և նախատեսեց մի շարք միջոցառումներ՝ ջարդարարների լաթաղանից ազատված հայ բնակչության բեկորները փրկելու համար: Հանձնարարվեց Կովկասի արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին՝ ամեն կերպ օգնել թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով արտաքսված բնակչությանը հայրենի երկիր վերադառնալու, Արևմտյան Հայաստանում դեմոկրատական կարգեր ստեղծելու գործին և այլն:

Այդ նույն շրջանում, Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ, Սովետական Ռուսաստանը ապաստան տվեց քաղցի ու հիվանդությունների մատնված հայ գաղթականներին Հյուսիսային Կովկասում և երկրի այլ շրջաններում, ընդորում, արվեց հնարավոր ամեն բան նրանց վիճակը բերեցնելու համար: 1918 թ. գարնանը, երբ թուրքական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս և տեղի ունեցան հայկական նոր կոտորածներ, Սովետական Ռուսաստանի կառավարությունը վճռական բողոքի նոտա ներկայացրեց ագրեսորներին: 1920 թ. աշնանը, երբ Հայաստանը դարձյալ ապրեց ծանր օրեր, Սովետական Ռուսաստանը նորից իր եղբայրական ձեռքը մեկնեց բազմաչարչար հայ ժողովրդին:

Այսպիսին էր Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների իշխանության անշահախնդիր օգնությունը հայ աշխատավորությանը, իշխանություն, որ դեկավարվում էր լենինյան ազգային քաղաքականության հումանիստական և վսեմ գաղափարներով: Այդ օգնությունը վճռական դեր խաղաց հայ ժողովրդի իսկական ազատությունը և վերածնությունը ապահովելու գործում:

Ավետիք Իսահակյանը ամենայն իրավամբ գրել է. «Հրդեհվող քաղաքների, արյան հեղեղների, անընպատակ ու անհամար զոհերի վրայով վերջապես մեզ էլ հասավ դարերի մեծագույն հանճար Լենինի մարգարեական, զգաստացնող ձայնը: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը փրկեց և կյանքի կոչեց հայ ժողովրդին, որը կանգնած էր գերեզմանի եզրին: Սկսվեց իսկական վերածնությունը, որի մասին ժողովուրդը երազել էր դարեր շարունակ... և նոր շինված մարդկային աշխարհում հայ ժողովուրդը ձեռք բերեց վաղուց կորցրած պետականությունը, ազգային և համամարդկային կուլտուրայի զարգացման ազատություն և հավերժական եղբայրություն ռուս ժողովրդի և մյուս ժողովուրդների հետ»:

Պատմության ընթացքը ցույց տվեց, որ հայ ժողովրդի բախտը, իսկապես, կապված է ոչ թե արևմտյան կապիտալիստական պետությունների հետ, ինչպես միշտ քարոզել է բուրժուա-նացիոնալիստական դաշնակցությունը կուսակցությունը, որի ավանտյուրիստական քաղաքականությունը շատ աղետներ պատճառեց հայ աշխատավորներին, այլ սոցիալիստական հեղափոխության, Սովետական Ռուսաստանի հետ:

3.

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, Հայաստանի աշխատավորական մասսաների հերոսական հեղափոխական պայքարը, սովետական իշխանության հաստատումը Հայաստանում կարմիր բանակի զորամասերի օգնությամբ վերջ դրեց հայ ժողովրդի դարավոր տառապանքներին: Ոտքի կանգնելով ռուս և մեր երկրի մյուս ժողովուրդների աջակցությամբ, նա անցավ խաղաղ, ստեղծագործական աշխատանքի, սկսեց կերտել իր նոր կյանքը և պայծառ ապագան: Հայ ժողովուրդը ունեցավ իր պետականությունը՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը, որը դարձավ Սովետական Միության Հանրապետությունների եղբայրական ընտանիքի իրավահավասար անդամը:

Անցյալում հետամնաց և մեծապես ավերված Հայաստանը սովետական իշխանության տարիներին ձեռք բերեց վիթխարի հաջողություններ: Վերականգնվեց քայքայված տնտեսությունը, ստեղծվեց հզոր, բազմանյուղ արդյունաբերություն, զարգացավ գյուղատնտեսությունը, ժողովրդական տնտեսությունը ենթարկվեց սոցիալիստական վերակառուցման, ծաղկեց գիտությունը և կուլտուրան:

Սովետական Հայաստանը դարձել է նաև ողջ աշխարհում ցրված հայ աշխատավորական զանգվածների մայր հայրենիքը: Օտարության մեջ ապրող բազմահազար հայ ընտանիքներ իրենց հանգրվանն են գտնում Սովետական Հայաստանում: Հզոր Սովետական Միության կազմում հայ ժողովուրդը վստահ է իր ապագայի նկատմամբ:

Հայ ժողովրդի, Սովետական Միության բոլոր ժողովուրդների, ազգերի ու ազգությունների բարեկամությունը և բարգավաճումը կոմունիստական կուսակցության մշտական հոգատարության առարկան է: Հայաստանի աշխատավորները մեծագույն բերկրանքով ու խոր երախտագիտությամբ ընդունեցին կուսակցության Կենտկոմի և սովետական կառավարության իրոք պատմական որոշումը՝ մեր հանրապետության ժողովրդական տնտեսության հետագա զար-

գացման մասին: Դա կոմունիստական կուսակցության ազգային իմաստուն հաղթականության դրսևորման մի նոր, վառ օրինակ է: Հայրական հոգատարությանը Հայաստանի աշխատավորները պատասխանում են կուսակցության և կառավարության որոշումը անպայման իրագործելու միակամ վճռականությամբ:

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը, սովետական պետությունը վարում են լենինյան արտաքին հաղթականություն՝ խաղաղության, ժողովուրդների համագործակցության և բարեկամության հաղթականություն. ձեռնարկում են ռեալ միջոցառումներ, որպեսզի ամրապնդվի ժողովուրդների անվտանգությունն ու ապահովվի ազատության, դեմոկրատիայի ու սոցիալական առաջադիմության գործն ամբողջ աշխարհում: Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը, որ անձամբ հսկայական աշխատանք է կատարում խաղաղությունը ամբողջ աշխարհում ապահովելու ուղղությամբ, ընդգծել է. «Աշխարհում ստեղծել այնպիսի կլիմա, որի պայմաններում պոտենցիալ ագրեսորները, արկածախնդրությունների և զենք շաչեցնելու սիրահարները ամենուրեք հանդիպեն ժողովուրդների ավելի ու ավելի վճռական ու համատեղ հակահարվածին, որի պայմաններում խաղաղությունը, անվտանգությունը և խաղաղ ապագայի վստահությունը գործնականում դառնան աշխարհի տարբեր շրջանների ավելի ու ավելի լայն մասսաների սեփականությունը. ահա այն նպատակը, որն արժանի է, որ նրա համար իր ուժերը նվիրաբերի ամեն ոք, ով սիրում է իր ժողովրդին և մտածում մարդկության առաջադիմության մասին»:

Սովետական ժողովուրդը, ողջ առաջավոր մարդկությունը շուտով նշելու են հիտլերյան ֆաշիզմի նկատմամբ տարած մեծ հաղթանակի 30-ամյակը: Մեր ժողովուրդը, որ Հայրենական մեծ պատերազմի ընթացքում տվեց 20 միլիոն զոհ, զայրույթով է հիշում ֆաշիստական ճիվաղների ոճրագործությունները և իր հաստատ կամքն արտահայտում՝ վճռական պայքար մղելու ֆաշիզմի, միլիտարիզմի, բոլոր ռեակցիոն ու ագրեսիվ ուժերի դեմ, որպեսզի չլինեն նոր պատերազմներ ու կոտորածներ, որպեսզի չկրկնվի այնպիսի ողբերգություն, ինչպիսին ապրեց հայ ժողովուրդը վաթսուն տարի առաջ:

(«Սովետական Հայաստան», 24 ապրիլի 1975)